**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

27.06.2022թ. N 02/16.4/6661-2022

<<Սնար>> սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Նարեկ Սարգսյանին
էլ. փոստ sarna800@mail.ru

<<Թիվ 1 Շինվարչություն>> բաց բաժնետիրական
ընկերության տնօրեն
պարոն Հրայր Մնացականյանին
էլ. փոստ buildingdep1@mail.ru

պատճենը՝ <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Արամայիս Ասրյանին
էլ. փոստ texdraft@mail.ru

պատճենը՝ <<ԱՌԱՋԸՆԹԱՑ-ԿՏԲ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Լևոն Ջզմեջյանին
էլ. փոստ levonjz60@mail.ru

Հարգելի գործընկերներ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու), <<Սնար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և <<Թիվ 1 Շինվարչություն>> բաց բաժնետիրական ընկերության միջև, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 2018 թվականի հունիսի 21-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ երկուսը միասին Կապալառու), 2018 թվականի սեպտեմբերի 17-ին կնքվել է

Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 639 870 000 (վեց հարյուր երեսունինը միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.14-րդ կետի պահանջների՝ Պատվիրատուն 2022 թվականի մայիսի 31-ին սահմանված կարգով ծանուցել է Կապալառուին 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի հունիսի 21-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին: Կապալառուի կողմից սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 8.14-րդ կետի պահանջները՝ Պատվիրատուն Կապալառուի հետ կնքված Պայմանագիրը 2022 թվականի հունիսի 27-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագրի լուծման օրվա դրությամբ կատարված, սակայն պատվիրատուին չներկայացված կատարողական փաստաթղթերը կարող եք տրամադրել մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը ներառյալ ժամկետում:

Հարգանքով՝

Recoverable Signature

X 

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Համիկ Բաղինյան
Հեռ: 011621822

Կատարող՝ գնումների կազմակերպման բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան
եռ: 011621722